ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(20 օգոստոսի, 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն.

> «Օրհնեա՛լ ես դու ի կանայս, եւ օրհնեա՛լ է պտուղ որովայնի քոյ. եւ ուստի՞ է ինձ այս՝զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս։ Զի ահաւասիկ իբրեւ եղեւ ձայն ողջունի քոյ յականջս իմ, խաղաց ցնծալով մանուկս յորովայնի իմում»
>
> *(Ղուկ. Ա. 42—44)։*

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ,

Ահա այս հիացումի խոսքերով է ողջունում Եղիսաբեթը Սբ. Կույս Մարիամ Աստվածածնին՝ արտահայտելով նաեւ իր որովայնում հղացած Սբ. Հովհաննես Մկրտչի ցնծության զգացումներն առ գալիք Փրկիչն աշխարհի։ Այսօր մենք նույնպես լի ենք ուրախությամբ ու խնդությամբ, քանզի Սբ. Տիրամոր բարեխոսական ու սփոփիչ ներկայությունն զգալի է նաեւ մեր օրերում, երբ սրտնեղում ու հիասթափվում ենք այս կյանքի անարդար կացություններից։ Սբ. Աստվածածնին խորհրդանշող Սբ. Եկեղեցու փրկարար ներկայությունն է, որ առկա է մեր կյանքում՝ հրավիրելով ամենքիս իր հովանու ներքո՝ հոգեւոր խնամք իրագործելու պատրաստակամությամբ։

Սիրելի՛ բարեկամներ, համաձայն մեր Սրբազան Եկեղեցու տոնացույցի՝ մենք դեռ շարունակում ենք նշել Սբ. Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնը, եւ այսօր ի մասնավորի նշում ենք նրա Աստվածածին պատվանունի հռչակման տոնը։ Երբ Սբ. Մարիամն արտահայտեց իր խոնարհ համաձայնությունը եւ «այո» ասաց՝ Հիսուս Քրիստոսին ծնունդ տալու հրավերին ի պատասխան, այդ նույն պահին նրա անարատ արգանդը վերածվեց սրբազան անոթի եւ կենդանի տաճարի, որտեղ Ինքը՝ Աստված

պիտի բնակվեր։ Մեր մեծանուն Սբ. Գրիգոր Նարեկացի վարդապետն ահա այս կերպ է տալիս Սբ. Աստվածածնի նկարագիրը. «...հարդարուած, որպէս տաղաւար, Որդուդ սուրբ բնակութեամբ» (Բան Զ.(Ա.)։ Այո՛, Սբ. Աստվածածինն այնքան սերտորեն կապված է տաճարի կամ խորանի հետ, որ Սբ. Տիրամոր անունով են օծվում բոլոր եկեղեցիները՝ ներառյալ մեր Լուսո Խորան Սբ. Էջմիածնի Մայր տաճարը։ Ինչպես Սբ. Մարիամն է ծնունդ տալիս Աստվածորդուն, այնպես էլ Եկեղեցին ծնունդ է տալիս Աստծու զավակներին՝ Մկրտության Սբ. Ավազանի միջոցով։ Այս կերպ և՛ Եկեղեցին, և՛ Սբ. Աստվածածինն իսկապես Տիրոջ բնակատեղին են ու սրբավայրը։

Գաղատացիներին ուղղված իր նամակում, որ այսօրվա ընթերցվածներից է, Սբ. Պողոս առաքյալը շեշտում է, որ մենք՝ Եկեղեցին, Քրիստոսի Մարմինը կազմող անդամներն ենք եւ կենդանի Աստծու տաճարը։ Նա գրում է. «Դուք կենդանի Աստծու տաճարն եք, ինչպես որ Աստված ասաց. «Նրանց մեջ պիտի բնակվեմ ու նրանց մեջ պիտի շրջեմ, նրանց Աստվածը պիտի լինեմ, ու նրանք՝ իմ ժողովուրդը (Բ. Կորնթ. Զ. 16. հմմտ. Ղեւտ. ԻԶ. 12, Եզեկ. Լէ. 27)»։

Ինչպես որ մենք թույլ չենք տալիս, որ մեր եկեղեցիներում որեւէ այլ առարկաներ դրվեն, ասենք՝ մահճակալ կամ կենցաղային այլ առարկաներ, նույնպես եւ մեր հոգում եւ սրտում տեղ պիտի գտնեն միայն անձամբ՝ Ինքը՝ Աստված, եւ հոգեւոր առաքինություններն ու արժեքները։ Մենք, որ Աստծու պատկերով ստեղծված, Եկեղեցու արգանդում՝ ավազանում, մկրտված, կենդանի Աստծու տաճարն ենք, ուր բնակվում է Սուրբ Հոգին, չպետք է թույլ տանք, որ պատահական ու անցողիկ ոգիներ ու կուռքեր բնակվեն ու հաստատվեն մեր մեջ։ Արդյո՞ք մենք ժամանակ ու բավարար ջանք գործադրում ենք մեր հոգեւոր տարածքը, մեր սեփական տաճարը ուշադիր ուսումնասիրելու համար, ինչպես այս աշխարհի բարեխիղճ տնտեսը, որպեսզի հայտնաբերենք ու հեռու վանենք մեր մեջ կանգնեցված կուռքերին։ Այդ կուռքերը պարզապես ֆիզիկական առարկաներ չեն։ Կռապաշտություն կարող է համարվել այն ամենը, ինչը շեղում է մեզ ու խանգարում մեզ Աստծուն մեր կյանքի կենտրոնում հաստատելուն։ Աստծու հետ մեր հաղորդակցությունը դառնում է ավելի ու ավելի սակավ մտահոգիչ՝ այն աստիճանի, որ, ի վերջո, այդ մեղքը կամ կուռքը դառնում է սովորական ու մինչեւ իսկ՝ հաճելի ու ցանկալի։

Սիրելի՛ քրիստոնյա եղբայրներ ու քույրեր, որքա՞ն հաճախ ենք մենք քննում մեր խիղճը եւ խնդրում Աստծուն, որ մատնացույց անի

մեր ներսում հաստատված կուռքերին, որպեսզի հեռացնենք դրանց մեր սրտերից։ Հարկավոր է, որ բոլորս բարձր գիտակցությամբ մասնակցենք Սբ. Պատարագին՝ Քրիստոսի Սբ. Մարմնի եւ Արյան հաղորդությամբ, եւ ընդունենք Տիրոջ բնակությունը մեր մեջ, որ փոխակերպում ու նմանեցնում է մեզ Իրեն։ Հենց սա՛ է բուն իմաստը Սուրբ եւ անմահ Պատարագի, որ մենք փոխակերպվենք ու վերածվենք Քրիստոսի խորհրդական Մարմնին։

Ճիշտ այնպես, ինչպես Սբ. Մարիամ Աստվածածինն ասաց՝ «այո», որ Աստծու համար տաճար հանդիսանա, նույնպես եւ մենք՝ որպես Քրիստոսի խորհրդական Սբ. Մարմին, կարող ենք եւ պարտավոր ենք արձագանքել Աստծու կոչմանն ու խոստմանը՝ բարձրաձայն ասելով՝ «այո»։ Այո՛, Տեր մեր Հիսուս Քրիստոս, հավատում ենք, որ Դո՛ւ ես մեր Փրկիչը, մեր բազմաչարչար ժողովրդի տառապանաց մխիթարիչը, արցախահայության հեզաբարո պաղատանաց ունկնդիրն ու կատարիչը ամենայն խնդրվածոց։

Եկե՛ք, սիրելի՛ բարեպաշտ զավակներ Հայաստանյայց Եկեղեցվո, սրտի խոնարհությամբ դառնանք մի սրբազան տաճար, որտեղ Քրիստոս բարեհաճությունը կունենա բնակվելու, եւ մենք կլինենք Նրա որդիներն ու դուստրերը։ Եկե՛ք խոստովանենք Նրա Սբ. Անունը եւ ազդարարենք, որ մենք Նրա ժողովուրդը կլինենք, ու Նա կլինի մեր Աստվածն ու Հայրը հավիտյան։ Այսօր եւ շարունակաբար, սիրելի՛ հավատացյալներ, փորձենք պատասխանել հետեւյալ այս հարցերին՝ ինչպե՞ս ենք մենք արձագանքում Աստծու հրավերին, ի՞նչ կուռքեր ենք մենք ստեղծել կամ թույլ տվել, որ մտնեն մեր ներքին ու հավաքական տաճարը, եւ թե ինչպե՞ս կարող ենք սուրբ անոթ դառնալ՝ «այո» ասելով Տիրոջը եւ Նրա փառքը մեր կյանքում ու աշխարհում ներպարփակելով։ Այսօր առավել, քան երբեւէ մենք հրատապ կարիքն ունենք Նրան հպվելու եւ Նրա սերն ու բժշկությունն ստանալու։ Ամեն։